

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԶՅ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ
Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Խմբային աշխատանքի միջոցով բանջարեղենով կերակարատեսակների պատրաստման արդյունավետությունը դասապրոցեսում

Անցկացման վայր՝

Վարդենիս

Աշխատանքի Ղեկավար՝

Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝

Մագդա Թովմասյան Ռոբերտի

Առարկա՝

Տեխնոլոգիա

Դպրոց՝

Մեծ Մասրիկ գյուղի միջն դպրոց

Վարդենիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գրական Ակնարկ	5
Վերլուծություն.....	9
Փորձարարական դաս1.....	10
Փորձարարական դաս 2.....	12
Դասի պլան 1.....	13
Դասի պլան 2.....	13
Եզրակացություն.....	16
Օգտագործված գրականության ցանկ.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Տեխնոլոգիա հանրակրթական առարկայի հիմնական նպատակն է սովորողներին նախապատրաստել ինքնուրույն աշխատանքային կյանքին. դաստիարակել կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի:

Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար:

<<Տեխնոլոգիա>> ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այն տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է:

Նախաձեռնողականության և ստեղծարարության տեխնոլոգիական մոտեցումն իբրև համընդհանուր ալգորիթմ որոշում է ուսումնական առարկայի նպատակը: Տեխնոլոգիա առարկան նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **խմբային աշխատանքի միջոցով բանջարեղենով կերակրատեսակների պատրաստման արդյունավետությունը դասապրոցեսում:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել խմբային աշխատանքի հիմնական առանձնահատկությունները,
- ներկայացնել բանջարեղենի նշանակությունը և դերը,
- կատարել դասերի վերլուծություն:

Աշխատանքի տեսական հիմքը: Աշխատանքի տեսական հիմքը կազմել են բազմաթիվ գիտնականների աշխատություններ:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Աշխատանքը շարադրելիս կիրառվել են ինչպես ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, այնպես էլ հատուկ մեթոդները, ինչպիսիք են՝ պատմական, համակարգակառուցվածքային, դոկտրինալ մեկնաբանման և սոցիոլոգիայի մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 18 էջ:

Գրական Ակնարկ

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների ծրագրով իրականացվող վերապատրաստման դասընթացները միտված են օժանդակելու «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցիչներին՝ մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը բարձրացնելու, աշխատանքային պարտականությունները պատշաճ մակարդակով կատարելու, շարունակական մասնագիտական զարգացում ապահովելու և որակավորման տարակարգերի հավակնելու գործընթացներում: Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը: Կրթել աշակերտին տեխնոլոգիապես, նշանակում է ձևավորել հասարակության ու պետության շահերին նպաստող, անհրաժեշտ գիտելիքներով, ունակություններով և հմտություններով զինված, աշխատասեր, ժամանակակից տեխնիկատեխնոլոգիական առաջընթացին ծանոթ, մասնագիտորեն ինքնակողմնորոշված անձ: Առարկայի հիմնական առաքելությունն է՝ սովորողներին նախապատրաստել ժամանակակից տեղեկատվական արդյունաբերական հասարակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքին և դաստիարակել կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություն: «Տեխնոլոգիա»-ն, ըստ էության, գործնական ուղղորդող ուսուցողական ոլորտ է: Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ¹:

Անմիջական կապը շրջապատող իրականության, երեխայի կյանքի ու կենսավորձի, հետաքրքրությունների ու երևակայության հետ, գիտելիքների կիրառական նշանակության

¹<<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012թ., էջ 57:

պարզաբանումը, դրանց միջոցով իրատեսական հնարավորությունների արտահայտումը և բազմաթիվ այլ արժեքներ, նպատակային օգտագործելու դեպքում, մեծ հեռանկարներ են բացվում սովորողի անձի ինքնահաստատման և ինքնաարտահայտման համար:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել:

Խմբային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ խմբային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Խմբային աշխատանքը խթանում է սովորողների.

- համատեղ մտավոր աշխատանքը, որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց,
- կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու ունակությունը,
- այլոց նկատմամբ հարգանքը,
- խմբի մաս լինելու գիտակցումը և խմբի համար պատասխանատվությունը²:

Խմբային այս մեթոդի էությունը հետևյալն է. դասավանդողը դասարանը բաժանում է 5 կամ 6 անդամ ունեցող խմբերի: Վերջիններս թեմաներ են ընտրում իրենց ուսումնասիրության համար, աշխատում, այնուհետև զեկույց են պատրաստում և ներկայացնում ամբողջ դասարանին:

Խմբային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

²Պապիկյան Կ., <<Տեխնոլոգիա>> առարկայի դասապլաններ, Երևան, <<ՎՄՎՊրինտ>> 2019թ., էջ 87:

Խմբային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բանջարեղեն են այն խոտաբույսերը, որոնց հյութալի մասերը՝ տերևները, ցողունները, արմատները, սոխուկները, պտուղները, ընձյուղներն օգտագործում ենք մեր սննդում: Տարբերում են բանջարեղենի հետևյալ հիմնական խմբերը.

- Արմատապտղավորներ՝ գոնգեղ, գազար, ամսաբողկ, բողկ, ճակնդեղ, արմատային մաղադանոս, ստեպղին, շաղգամ, արմատային նեխուր և այլն:
- Տերևաբանջարներ (սննդի մեջ օգտագործում են տերևները և հաստացած տերևակոթունները)՝ կաղամբ, հազար, սպանախ, սամիթ, տերևային ու տերևակոթունային նեխուր, տերևային մաղադանոս, թրթնջուկ, խավրձիլ և այլն:
- Պտղաբանջարներ (սննդի մեջ պիտանի են մատղաշ սերմնաբանները և հասուն պտուղները)՝ լոլիկ (պոմիդոր), սմբուկ (բադրիջան), տաքդեղ, ձմերուկ, սեխ, դդում, դդմիկ, ծաղկակաղամբ, ոլոռ, լոբի, բակլա, շաքարային եգիպտացորեն, բամիա, սեխադդում և այլն:
- Սոխուկավորներ (սննդի մեջ օգտագործում են սոխուկներն ու տերևները)՝ սոխ (գլուխ, սեզատերև, պրաս և այլն), սխտոր:

Առանձին խումբ են կազմում կարտոֆիլը և համեմունքային բանջարեղենը՝ անխոնր, գինձը, կոտեմը, ուրցը, դաղձը, թարխունը, խնկածաղիկը, գաղտրիկը և այլն:

Բանջարեղենն անփոխարինելի, համեղ և շատ օգտակար սննդամթերք է. սննդարար արժեքը պայմանավորված է նրանց մեջ պարունակվող դյուրամարս նյութերով: Բանջարեղենը պարունակում է շատ ջուր. օրինակ՝ հազարի տերևներում՝ 96%. կարտոֆիլի պալարներում՝ 80%, և այլն:

Բանջարեղենը հարուստ է մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ վիտամիններով, հանքային աղերով, սպիտակուցներով, տարբեր օրգանական թթուներով, ածխաջրերով, ճարպերով, բուրավետ նյութերով, եթերայուղերով. օրինակ՝ կարտոֆիլը շատ հարուստ է օսլայով, ճակնդեղը՝ շաքարով, կաղամբը՝ C վիտամինով, գազարը՝ կարոտինով (A-նախավիտամին), խավրծիլը՝ օրգանական թթուներով, կանաչ ոլոռը՝ սպիտակուցներով, սամիթը՝ բուրավետ նյութերով: Այդ պատճառով սննդի օրաբաժնում անհրաժեշտ է որքան հնարավոր է բանջարեղենի շատ տեսակներ ընդգրկել՝ թարմ, եփած: Բանջարեղենը յուրօրինակ համ ու բուրմունք է տալիս կերակուրներին:

Բանջարեղենի սննդարար արժեքը պահպանելու համար անհրաժեշտ է այն ճիշտ մշակել և եփել: Օգտագործելուց առաջ բանջարեղենը պետք է լավ լվանալ հոսող սառը ջրով, որովհետև նրա մակերեսը կարող է ախտահարված լինել մանրէներով, այդ թվում՝ աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներով, որդերի ձվերով:

Արմատապտուղներն ու կարտոֆիլը լվանում են մինչև դրանց վրայից հողը լրիվ մաքրվի, ապա շատ բարակ շերտով կեղևում են, քանի որ վիտամիններն ու հանքային աղերը գտնվում են անմիջապես կեղևի տակ, հեռացնում վնասված մասերը: Մաքրած բանջարեղենն անհրաժեշտ է մեկ անգամ էլ լվանալ և միայն դրանից հետո մանրատել: Որքան խոշոր է կտրտված բանջարեղենը, այնքան քիչ է վիտամինների կորուստը: Գերադասելի է բանջարեղենը մաքրել և մանրատել օգտագործելուց կամ եփելուց առաջ: Մատղաշ վարունգը, բողկը, գազարը խորհուրդ է տրվում սննդի մեջ օգտագործել կեղևով:

Բանջարեղենը երկար պահելիս կամ ջերմային մշակման ենթարկելիս C վիտամինն արագ քայքայվում է, ուստի ավելի լավ է օգտագործել թարմ և հում բանջարեղենը:

Բանջարեղենը նպաստում է մարսողությանը, կանոնավորում մարդու նյարդային, մարսողական համակարգերի և այլ օրգանների գործունեությունը, մեծացնում օրգանիզմի դիմադրողականությունը մի շարք հիվանդությունների հանդեպ: Բանջարեղենի որոշ տեսակներ, հատկապես սոխն ու սխտորն ունեն հակաանեմիչ և մանրէասպան հատկություններ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասերի ընթացքում մենք կիրառեցինք համագործակցային ուսուցման մեթոդը, որ աշակերտներին հնարավորություն տվեց խմբային աշխատանքի միջոցով ծանոթանալ բանջարեղենին և դրանցով պատրաստել կերակրատեսակներ:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է.

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և կարող՝ լինելու խմբի անդամ և համագործակցելու³:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ:

³<<Տեխնոլոգիա>> առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, հեղ.՝ Հովսեփյան Ս., Աղաջանյան Ս., Բարսեղյան Մ., Երևան, 2007 թ., էջ 52:

Փորձարարական դաս 1

Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի՝ պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,

- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Խմբային աշխատանքների կատարումից հետո իրականացվում է տվյալների մշակում և սովորողների առաջադրանքների գնահատում:

Գոյություն ունեն գնահատման երկու փոխկապակցված ձևեր՝ ձևավորող (ուսուցանող) և միավորային:

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում.

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա:

Փորձարարկան դաս 2

Տևողությունը՝	45 րոպե
Դասարան՝	7-րդ դասարան
Առարկա՝	Տեխնոլոգիա
Թեման՝ նշանակությունը:	Մրգերի տեսակները,
Ուսուցման մեթոդներ	Զրույց,
մտազրոհ Օգտագործվող նյութերը տեսակներ, քարտեր:	Մրգերի

Նպատակը	Ծանոթացնել մրգերի տեսակներին և նրանց նշանակությանը մարդու կյանքում:
Դասի ընթացքը նշանակության	Դասը սկսել զրույց մրգերի և նրանց մասին: Ըստ նկարների և ձեռքի տակ ունեցած մրգերի խոսել դրանց օգտակարության և օգտագործման մասին: Այնուհետև ձևավորել խմբեր (4-խումբ 5-ական) և հանձնարարել, որ սովորողները պատրաստվեն 5 րոպեում ներկայացնել որևէ մի բան օգտակարությամբ և օգտագործման եղանակներով:
Անդրադարձ	Այս փուլում հասկացա, որ սովորողները չնկալեցին, որ մրգի մեջ ինչ վիտամիններ կան և որոշեցի, որպեսք է նաև գրենք այդ վիտամինները և համապատասխան մրգերը, որից հետո հասա իմ նպատակին:

Դասի պլան 1

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Բանջարեղենով կերակրատեսակների պատրաստում

Առարկա՝ Տեխնոլոգիա

Դասարան՝ 6 – ըն

Օգտագործվող գրականությունը՝ Հանրակրթական դպրոցի 6 – ըն դասարանի դասագիրք

Օգտագործվող մեթոդները՝ Անհատական մոտեցում

Նախապատրաստական աշխատանքներ՝ Տարբեր բանջարեղենի տեսակներ, դանակներ, տախտակ, բաղադրատոմս

Դասի տեսակը՝ Համակցված

Նպատակը՝ Սովորողներին ներկայացնել բանջարեղենների նշանակությունը մարդու կյանքում, գեղագիտական ճաշակի ձևավորման, անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման հետ: Չարգացնել աշակերտների մոտ բանջարեղենի տեսակավորման, լվացման մաքրման, գործողությունների հաջորդականությանը:

Խնդիրները՝ Կարողանա կատարել բանջարեղենների նախնական մշակում, մշակարույսերից պատրաստել կերակրատեսակներ:

Չափորոշիչ՝ Գիտենա բանջարեղենների մեջ վիտամինների պարունակության, պահպանման տեխնոլոգիան: Բանջարեղենի խնայողաբար օգտագործումը:


Խթանում՝


<<Մտագրոհ>> մեթոդի միջոցով օգտագործել սովորողների գիտելիքների առկա մակարդակը բանջարեղենից կերակրատեսակներ պատրաստելու վերաբերյալ:

Աշակերտներին ուղղել հետևյալ հարցերը.

- Բանջարեղենի մանրացման ի՞նչ ձևեր գիտեք:
- Որո՞նք են բանջարեղենի վերամշակման հիմնական եղանակները. օգտվել պրիզմա մեթոդից:

Օրվա դասի պլան2





Իմաստի ընկալում

Բանջարեղենի լվացում, մշակում և ինքնուրույն կերակրատեսակի պատրաստում:

Կշռադատում

- Քննարկել թեման <<Քառաբաժան>> մեթոդով:
- Ի՞նչ զգացի:
- Ինչպիսի՞ զգացողություն ունեցա համտեսելուց հետո:

Դասի գնահատում:

Օրվա դասի պլան 2

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Բանջարեղենով աղցանների պատրաստում

Առարկա՝ Տեխնոլոգիա

Դասարան՝ 6 – րդ

Օգտագործվող գրականությունը՝ Հանրակրթական դպրոցի 6 – րդ դասարանի դասագիրք, աղցանների բաղադրատոմս

Օգտագործվող մեթոդները՝ Խոսքային բացատրություն, ցուցադրում, մտազրոհ, արոստիկոս

Նախ. աշխատանքներ՝ Բանջարեղենի տարբեր տեսակներ, համեմունքներ, դանակներ, տախտակ, աղցանաաման

Դասի տեսակը՝ Համակցված գործնական

Նպատակը՝ Աշակերտները իմանան բանջարեղենի տեսակների մշակման ձևերի մասին, իմանան բանջարեղենից աղցանների պատրաստման և ձևավորման մասին

Խնդիրները՝ Չարգացնել գույգերով աշխատելու կարողություններ

Դասի ընթացքը

- Կիրառել սննդամթերքների վերամշակման, կտրատման տարբեր մեթոդներ

- Դասարանի աշակերտներին բաժանել երկու խմբի:
- Հանձնարարել յուրաքանչյուր խմբի ընտրի բանջարեղենից որևիցե աղցան:
- Հանձնարարություն տալ, որպեսզի ամեն մի խումբ կարողանա ճիշտ պատրաստել աղցանը և ձևավորել:
- Հետևել, որպեսզի համեմունքները չափով օգտագործեն, ձևավորեն, գեղեցիկ սպասքաղերեն սեղանը և մատուցեն աղցանը:
- Մտագրոհի միջոցով վեր հանել խմբի անդամների գիտելիքները բանջարեղենի մասին:
- Ամեն մի խումբ աղցան պատրաստելու համար նշի ինչ բանջարեղեն օգտագործեց և ներկայացնի բաղադրատոմսը:
- Յուրաքանչյուր խումբ ներկայացնի իր պատրաստած աղցանի մեջ պարունակող բանջարեղենի մասին արրոստիկոս:

Գիմացկուն է ու ամուր

Գեղնավուն է ու հյութեղ

Ուտում ենք մենք ու հիանում

Մեզ այն շատ է դուր գալիս:

Միրելի է բոլորին

Երեխաների պաշտելին

Խրթիսրթան ու հաճելի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ:
- Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:
- Անմիջական կապը շրջապատող իրականության, երեխայի կյանքի ու կենսավորձի, հետաքրքրությունների ու երևակայության հետ, գիտելիքների կիրառական նշանակության պարզաբանումը, դրանց միջոցով իրատեսական հնարավորությունների արտահայտումը և բազմաթիվ այլ արժեքներ, նպատակային օգտագործելու դեպքում, մեծ հեռանկարներ են բացվում սովորողի անձի ինքնահաստատման և ինքնաարտահայտման համար:
- Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել:
- Խմբային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ խմբային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է

պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

- Դասերի ընթացքում մենք կիրառեցինք համագործակցային ուսուցման մեթոդը, որ աշակերտներին հնարավորություն տվեց խմբային աշխատանքի միջոցով ծանոթանալ բանջարեղենին և դրանցով պատրաստել կերակրատեսակներ:
- Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պապիկյան Կ., <<Տեխնոլոգիա>> առարկայի դասապլաններ, Երևան, <<ՎՄՎՊրինտ>> 2019թ.:
2. Հովսեփյան Ս., Աղաջանյան Մ., Բարսեղյան Ս., <<Տեխնոլոգիա>> առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2007 թ.:
3. <<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012թ.: